

ՀԱՅԿ ԱՃԵՄԵԱՆ

Բագրատ Վարդ. Գեղրդ-Թաւաֆալեան

6

Ատրպատականի Սալմաստ գաւառի արեւմուտքը, Հին-Քաղաք (Քէօհնա-շահար) մեծ գիւղին մէջէն անցնելով դէպի արեւմտեան հիւսիսը կը մտնենք կանաչազարդ ու գեղեցիկ հովիտ մը, որուն մէջ-տեղէն կը հոսի Դերիկի գետակը: Բնութեան սքանչելի տեսարանները գիտելով, միշտ գետակի ափերէն յառաջանալով՝ երկու ժամէն կը հասնինք Դերիկի Ս. Աստածածին վանքը, որ դարեր առաջ կառուցւած է հարթ բլուրի մը դապաթին, թիկունքին ունենալով բարձը ու լայնանիստ լեռներ, առջեւը՝ զողաւոր ու գեղեցիկ լեռնահովիտ մը, որ կը ներկայացնէ բնական ամրութիւններու եւ անմատչելի բարձունքներու շարան մը: Այս լեռնահովիտն ունի զանազան յիշատակալից վայրեր, որոնց հաեւ կապւած են ուրախ եւ տիսուր յիշուղութիւններ: Բաֆֆիկի վիպական հերոսներու զործունէութեան վայրերէն մէկը եղած է նաեւ Դերիկի լեռնահովիտը, որուն մէջ կը գըտնլուի «Կայծեր»ի Որսորդ Աւոյի վիպական քարայրը: Դերիկի ամէն մէկ ժայռ, ամէն մէկ բարձունք կը յիշեցնէ մէր ազատազրական արիւնոտ պայքարի դէպերէն ու դէմքերը: Այստեղ է նաեւ Դուշման Դարասին (Թշնամիի ձորը), Դուշմանայ լեռներն իրենց սէդ բարձունքներով եւ խոժոռ, ահարկու ժայռերով, որոնց ծերպերն ու փապարները ապաստան դարձեր են քիւրտ աւագակներուն, հրոսակներուն, ինչպէս նաեւ մէր հայդուկներուն եւ ոազմիկներուն: Այս մըթին ու խորին ձորերն, այս սէդ ու վէս գաղաթները, այս ոլորապտոյս կածաններն ու զարհուրելի կիրճերը ականատես եղած են կեանքի եւ մահւան արիւնալի պայքարներուն, հերոսական ինքնապաշտպանութեանց, դիւցազնական մահերու եւ ինքնակամ նահատակութեան՝ վասն աղղի եւ հայրենեաց:

Բնկերներու եւ ուխտաւորներու խումբով մը 1930-ի Յունիսին, Սալմաստի Հաֆթւան գիւղէն ճամբայ ելանք դէպի Դերիկը:



ԲԱԳՐԱՏ ՎՐԴ. ԹԱԼԻՔԱՆԵԱՆ

Քիչ մնացեր էր որ հասնէինք, երբ թեթեւ բայց հաճելի անձրեւ մը սկսաւ մաղմղւիլ: Մտանք քարի մը տակ, անձրեւը քիչ մը գաղրելէ յետոյ ճամբանիս շարունակեցինք: Մեր մէջ կային եւ հասակաւորներ եւ երիտասարդներ - բոլորս ալ ուրախ ենք, կերպենք, կը պատմենք, կը կատակենք:

Լուսաբացին կը մտնենք Դերիկի աւերակ մատուռը, որուն կեսաքանդ գմբէթը եզկրաչարժի ատեն (1930 Մայիս թ), հիմնովին կործաներ է: Կը մտնենք Դուշմանայ ձորը, կերթանք ջերմուկները, որոնք խորտակւեր են, կը մտնենք հովիտները, կը բարձրանանք վահքի պարիսօներուն վրա, կը համբուրենք Զաթոյի ու Շէրոյի եւ այնահատակ հայրուկներու գերեզմանները, կերպենք անոնց երգերը եւ յաջորդ օրը կը վերադառնանք Սալմաստ :

Դերիկը մեր վահքերու պատմութեան մէջ ուշադրաւ տեղ չունի իրք վահական կամ գրչութեան կեղրոն: Հասարակ ուխտատեղի մը եղած է իր պարզ մատուռով, որուն մօտ կը գտնեի նաև համանուն գիւղը - Դերիկ, որ 40 տարի առաջ հայրանակ էր, 10-15 ընտանիք-ներով, բայց վանքը վերջնական կործանման ենթարկւելէ յետոյ գիւղացիք ցրիւ եկան: Դերիկ գիւղն այժմ քրտաքնակ է:

Մեր ժողովրդական զբոյցներու եւ երգերու մէջ Դերիկը կը լիւ ւի:

Ժողովուրդը կը պատմէ, որ օր մը քիւրտի մը կթան ոչխարը (մաքի) կը մտնէ Դերիկի հայերու ոչխանը երու հօտին մէջ: Քիւրտը կը մտնէ Դերիկի հայերու ոչխանը երու հօտին մէջ: Դերիկը կը մտնէ Դերիկի հայերու ոչխանը երու հօտին մէջ: Դերիկը կը մտնէ Դերիկի հայերու ոչխանը երու հօտին մէջ: Ահա այդ ժողորդական երգումը, որուն ի լուր քիւրտը կը հաւատայ, կը միամտեի ու կը հեռանայ.

Ես մեռնեմ Դերկայ դերան,
Խայու ծամած քրդու քերան:
Թէ կերեր եմ քրդու մաքին,
Թող լոս դառնայ իմ խոր խոզին,
Թէ շեմ կերեր քրդու մաքին,
Քրդու մօրթու մէջ իմ ք...ին:

Վասպուրականի Շատախ գաւառի Յուձետ գիւղացի հայդուկ Զաթօն 1894-ի դարնան պատահական գնդակի մը զոհ դարձաւ Դերիկի մէջ: Անոր հայրենակից եւ զինակից ընկեր - հայդուկ Շերօն աւ 1896-ի Ապրիլին, սպաննեցաւ Դերիկի օրհասական կուի ժամանակ,

որուն զեկավարն էր Նիկոլ-Դումանը։ Սա նոյն թւի Մարտին 72 ռազմիկներով Վանէն երբ Սալմաստ կանցնէր զէնքեր փոխադրելու, Դերիկի մէջ հաղարաւոր քիւրտերու կողմէ պաշարւեցաւ։ Հերոսական եւ օրհասական կուէ մը յետոյ, որուն մէջ նահատակւեցաւ Շէրօն, խոմբն անցաւ Սալմաստ։

Հայրուկ Շէրոյի յիշատակին եւ Դերիկի կուի մասին ժամանակին յօրինած է ժողորդական սիրուն երգ մը, որմէ կը յիշեմ այս տողերը, լսած ըլլալով հանդուցեալ Նաղարէթ Սապունձեանէն։

Դերեկայ սարեր բոներ դուման, *)
Ոչ մէկ տեղէն չը կայ գիւման,
Զարկ'f, տղե'րf, Ֆկաւ դուշման։

Զարբի'ր, Շէրօ' մեռնիմ ֆեզի,
Սէրն Աստուծոյ, օգնէ մեզի։

Դերեկայ սարէն փչէր զով հով,
Արեւ կշտէն անցնէր ամպով,
Ես ֆեզ տեսնեմ երազներով։

Զարբի'ր, Շէրօ' մեռնիմ ֆեզի,
Սէրն Աստուծոյ, օգնէ մեզի։

Ո՞վ չէ լսած Սեւ-Քարեցի աննման Սաքոյի յօրինած ու երգած այնքան գեղեցիկ ու յուղիչ երգը, որ մինչեւ այժմ ալ հաճոյքով կերգեն շատերը։

Այս երկի մէջ ակնարկ կայ վարդապետի մը մասին, որ հաւանաբար Թաւաքալեանն է։ Կը յիշւի նաև Դերիկի անունը։ Մէջերենք այդ երգն ամբողջովին։

Այն օրը որ ես ֆեզ տեսայ,
Քեզ ինձ ընկեր ես ընտրեցի,
Որտեղ տեսայ Սեւ-Քարեցի,
Քո պատճառով շատ սիրեցի։

Սեւ Քարիդ դուրքան, Սաքօ' զան, ա'խ,
Ախպէր զան ա'խ, Սաքօ' զան . . .

*) Դուման կը նշանակէ մէզ, մառայուղ, մըժ։ Այս բառը այսուեղ փոխարեական իմաստ ունի, կը նշանակէ՝ սարերը մէզ ու մառայուղի նման բանած են քշնամիներով։ Այսու ֆիւրտեր էին։

Հարցրեցի վարդապետին,
Ասի ո՞րտեղ է աբեղան, *)
Աբեղայ չէ՛, ասաւ, որդի՛,
Հայդուկ է այդ սիրուն տղան:
Հայդուկի՞դ դուրքան, Սախօ' ջան, ա՛խ,
Ախսկը ջան, ա՛խ, Սախօ' ջան . . .:
Դերիկ վանքից վերադաշտան,
Նշան զարկելու գմացին,
Պետօն, Կարօն Դաշնակցական,
Ընկեր Էին մեր Սահքոյին:
Ընկերի՞դ դուրքան, Սախօ' ջան, ա՛խ,
Ախսկը ջան ա՛խ, Սախօ' ջան . . .

Դերիկը մեր յեղափոխութեան ազատագրական շարժման գլխաւոր կեղբառներէն մէկը եղած է 40-45 տարի առաջ՝ նախ Արմենականութեան եւ ասլա Դաշնակցութեան համար: Յեղափոխական մարմիններու որոշումով վանքը Մըլապատւեցաւ բաւական հասու եւ ամուռ քարաշէն պարիսպներով, որոնք կիսաքանդ կը մնան մինչեւ մուր քարաշէն պարիսպներով, որոնք կիսաքանդ կը մնան մոտիկ, Արառութիւնյժմ: Պարսկա-տաճկական սահմանադլուխին մօտիկ, Արառութիւնյժմ: Խանասորի դաշտին վրայով երթեւեկող յեղափոխական բան եւ Խանասորի դաշտին վրայով երթեւեկող Դերիկը, ապահով եւ խումբերու եւ սուրհանդակներու կայանն էր Դերիկը, ապահով եւ անկասկածելի վայր մը, որուն վրա կիշխէր Հայ յեղափոխութեան անկասկածելի վայր մը, որուն վրա կիշխէր Հայ յեղափոխութեան անկասկածելի վայր մը, որուն վրա կիշխէր Հայ յեղափոխութեան անկասկածելի վայր մը:

Աւերակ մատուսի կամարներուն տակ՝ Բագրատ վարդապետը յարական կերպէր, իսկ Դուչմանայ ձորին մէջ ուաղմաշունչէ սական շաղանէր կը հնչէցնէր: Խաչի եւ սուրի գաղափարը յուզիչ ներդաշնակութեամբ կը հնչուի սրբավայրը դարձած էր յեղափոխականներու կայանն ու ուաղմաշայրը:

Եւ այս բուլողը կընէր խորին գիտակցութեամբ, վառ յոյսերով: Եւ այս բուլողը կընէր սուսնամ թաւաքայեանը Դերիկի վանահայրութիւնը ստանձ-

**) Սեւ-Քարեցի Սախօն 1890ական թափանցներու սկզբին ժամանակ մը ապրեցաւ Ս. Ստեփանոս Նախավկայի վանքին մէջ՝ զինական վոխադրութեան եւ այլ յեցաւ կամարներու համար: Յիշեալ վանքի տաճարին դիմացը, արեւմտակողմը, դափոխական գործերու համար: Յիշեալ վանքի տաճարին դիմացը, արեւմտակողմը, գետնայարկ սենենակի մը մէջ կապրէր Սախօն, որ սենենակի պատի վրա իր ձեռքով գրած էր. «Սեւքարեցի Սախօն Աստուածատրով»:

Սեւ-Քարեցի Սախօն եղած է Ս. Ստեփանոս Նախավկայի եւ Դերիկի վանքերու վաճառայքերու փխանորդը (մէքի):

նեց, ահա թէ ինչո՞ւ նա եկաւ Դուշմանայ ձորը, ուր կը վիստայլին հազար-հազար հարամիներ ու թշնամիներ :

Դարերով լքւած, աւերակ եւ ամայի սրբավայրը, որ ուխտատեղի մնալով հանդերձ, եթէ դարձաւ հայ աղատագրութեան պայքարի ռազմավայրերէն մէկը, գլւատորպէս թւաքալեանի անհատական ջանքներուն չնորհիւ էր : Էջմիածնի մեղկ ու հանդիստ կեանքն արհամարհելով նա եկաւ անցաւ այդ դուշմանաբնակ Դուշմանայ ձորը, նորոգեց Դերիկը, դարձուց բնակելի, սիրելի վայր մը : Մինչեւ իսկ աւերակ տաճարը նորոգեց, ներքնապէս զարդարեց, ժամասացութիւն ու տնտեսութիւն հաստատեց, ուխտաւորներու եւ հայութկներու համար բնակարաններ շինել տաւաւ : Ծառեր տնկեց, բանջարանոց մշակեց, մէկ խօսքով՝ վանքը բարեզարդեց ու չէնցուց : Տօնական օրերուն, երբ ուխտաւորներուն թիւը շատ կըլլար, երբ փոքրիկ մատուռը կը լցցէր բարեզաշտներով եւ շատերն ալ դաւիթին մէջ կաղօթէին, թաւաքալեանը պատարագիչի իւր հանդերձներով, խաչն ու դաւազանը ձեռքին՝ ողեւորւած ու յուղած քարող կը խօսէր : Անոր վանահայրութեան օրով, ուխտաւորներէն մէկը՝ Սէյրին այսպէս կը պատմէ իւր տպաւորութիւններն ու թաւաքալեանի քարողը *) :

«... Սկզբում փոքրիկ, փոքրիկ բլուրներ, նրանց յաջորդում էին աւելի մեծերը, որոնցից սկսում էին՝ լեռներ եւ ասլա լեռնաշղթաներ :

«— Դերիկը, Դերիկը, — սրտատրով կանչեց ուխտաւորներից մէկը : Հեռում նշմարում էր տաճարի սպիտակ կաթուղիկէն :

«Օ՛չ, ինչպէս դիւթեց մեղ, բոլորիս լեռնալանջում բազմած այն փոքրիկ, կախարդական գմբէթը :

« Թիկունքին լայնանիստ, քարքարոտ սարեր, իսկ առջեւում մի գեղեցիկ, գողաւոր լեռնահովիստ, հարթ բլրի գլխին նստել է Դերիկը :

« Երեկոյեան ժամերգութիւնը գեռ չէր վերջացել : Հաղիւ լւացւած ու թափ տւած ճանապարհի փոշին, մենք շտապեցինք համբուրել Ս. Աստածնի սեղանը :

« . . . Կիրակի օրւայ պատարագը հանդիսաւոր էր : Ինձ այնպէս էր թուում, որ Դերիկի փոքրիկ, անզարդարանք մատուռում երդերն աւելի վեհ, աւելի տպաւորիչ էին, քան մեր դիւղի փառաւոր եկեղեցում : Գեղեցիկ ու տպաւորիչ էր եւ այն վարդապետը (խօսքը թաւաքալեանի մասին է . Զ. Ա.) որ կանդնած ամբիոնի վրա, խօսում էր ժողովրդի հետ :

*) Սէյրի - « Դերիկ կամ դէպի անմահութիւն » : Թիֆլիս, 1911, էջ՝ 12-16, 41-48:

Ահա եւ թաւաքալեանի քարոզը .

«Հայ ժողովուրդ, դու սկրում ես քո տունը, պաշտում ես քո սրբերը: Լեռների այս ամայութեան մէջ դու հերսութեամբ պաշտպանում ես հազար տարիների արքավայրը: Մի ինչ որ անհամականի պանամ ես մէջ, որ միշտ սուազ է մղում քեզ. այդ ուժը քո պահապան կայ քո մէջ, որ միշտ սուազ է մղում քեզ. այդ ուժը քո պահապան հրեշտակն է, նա քեզ հազար տարիներ պահել, պահպանել է, հազար արիւն-գէտերից է անցկացրել, հազար սուր ու քրից է փրկել: Դու մի արմատ ունես, որի վրա ամած նիւլերը քանի կարառում են, այնին էլ նա նոր-նոր ջիւեր է արձակում, որոնք մեծանում ու հովաշատ նիւլեր են դառնում: Քո աստղը երբեք չի մարի, քո արմատը երբեք չի չորանայ: Սիրիո քո վաքանը, սիրիո քո աշխատանքը եւ միշտ, ամէն տարի նորոգիր ուլսոտ քո պապերին: Սիրիո՛ք քո աշխատանքը, քո պապերի արիւնն ու քրտինքը, եւ հաւատա՛, որ դու կը գտնես քո անմահութիւնը . . . »:

Եւ վարդապետի ձայնը զանգակի ոլէս զօղանջում էր, ամբողջ մատուռը լցնում :

«Եղպէս վարդապետ դեռ չէր տեսել Սալմաստը», — նստած վրան-ների առաջ՝ խօսում էին ուստաւորները՝ երեկոյեան պլղլացող աստղերի տակ — առաքեալի պէս էր խօսում :

«. . . Բայց ես ծերումնի Մեսրոպի կողքին նստած լսում եմ նրա պատմութիւնները: Գիշերից անցել էր: Դեռ եւս լսում էին թմրուկի ձայնը եւ պարողների ուրախ ու հնչուն երգը:

« — Այստեղ, Դերիկում կրակ վառեցին Բաֆֆիի կայծերը, — ոգեւորւած խօսում էր ծերունի Մեսրոպը, — այստեղ էր որսորդ Աւօի գետունը այստեղ էր Մարօն եւ այստեղ էր, որ հրացանը կապած առօրի լծան վրա, հերկ էր անում հասօն: Այստեղ էին որսորդ Աւօի աշակերտները՝ Ասլանը, Կարօն՝ իրանց ընկերներով:

«. . . Հաղիւ անցել էր այդ օրերից մի, թէ երկու տարի, մի օր բերեցին ու մեր դիւլի եկեղեցում պահեցին Դերիկի մատուռի ըլլոր բերեցին ու մեր դիւլի եկեղեցում պահեցին Դերիկի մատուռի ըլլորը, աշտանակները, աշտանակները եւ ուրիշ անօթները: Մի դեստունները, աղտկերները, աշտանակները, որոնց մէջ էին Դերիկի կաշէտ առորիչ օր էլ բերեցին ուրիշ բաներ, որոնց մէջ էին Դերիկի կաշէտ առհազին ինոցին եւ մի սնտուկ, որի առջևի կողմից կային երկու ծակեր՝ ծածկւած խոշորացոյց ապակիներով:

«. . . Ի՞նչ էր պատահել, ի՞նչու մեր գլւղն էին բերում Դերիկի հիւ հարստութիւնը:

« Հայաստանի մէջ, հեռու սարերի վրա, ինչ որ բաներ էին կատարել: Քրղերը սուր վերցրած՝ հասել էին մինչեւ Դերիկ եւ սպառնում էին յարձակւել ու ամէն ինչ աւերել: Այդ պատճառով տեղափոխում էր Դերիկի ունեցած հարստութիւնը:

« . . . Դերիկը կործանւեց . . . : Մեծ հրդեհ էր բռնկել Հայոց աշխարհում, վասում էր հրդեհը եւ հանգնող չկար: Գնացին Դերիկի քաջերը, գնացին այն հրդեհի մէջ, ու էլ չվերադարձան:

« Գնաց եւ Դերիկի անձնւէր հայր սուրբը:

« Դերիկը մնաց անտէր: Եւ եկան քրդերը, ծածկեցին այն գեղածիծաղ լեռները, լցրին այն ծիծաղախիտ ձորերը, կողոպտեցին ու այրեցին փոքրիկ մատուռը, եւ աւերն ու արիւնը թագաւորեցին Դերիկի վրա եւ լուցեցին անուշ երգերն ու սուրբ տաղերը այն գեղածիծաղ լեռներում, եւ այն ծիծաղախիտ ձորերում . . . »:

Թաւաքալեանի կեանքի եւ գործունէութեան շքեղ էջերը Մայր Երկրի եւ Դերիկի մէջ անցուցած տարիներն են: Այնուհետեւ անոր ժողովրդանէր սիրտն ու սրաթուիչ հոգին ենթարկւեցան բազմ ատեսակ կաշկանդումներու: Անոր կեանքի վերջին տարիները յուսահատ ու թաւալագլոր վայրէջք ունեցան, Ազգին ու հայրենիքին նւիրւած ուխտեալ քարոզիչը, «Դերիկի հերոս» վարդապետը քաղաքական գործունէութեան եւ յեղափոխական աշխատանքի լծւած ըլլալու փաստերով հետապնդման ենթարկւեցաւ իրանի, Թուրքիոյ եւ Ռուսաստանի կառավարութեանց կողմէ, մինչեւ որ Խրիմեան Հայրիկն ալ ստիպւած եղաւ 1893-ի աշնան կանչել էջմիածին:

Զ.

Ամբողջ էութեամբ ու խառնւածքով յեղափոխական ծնած թաւաքալեանի յոյսերն ու երազները մոխիր դարձան կրօնական ասպարէզի մէջ: Պաշտօնականութեան եւ հրամաններու ցանցերը կաշկանդեցին անոր սրաթուիչ թեւերը: Վեղարակիր յեղափոխականը խորապէս հիմաթափեցաւ նաեւ «Անդրանիկ յեղափոխական եւ մեծ դեմոկրատ», Վասպուրականի Արծիւ Խրիմեան Հայրիկէն, երբ սա պետութեանց ճնշումներու վրա Դերիկի վանահայրը էջմիածին բերել տաւ եւ լծեց անոր հոգիին ու սրտին խորթ եւ անհրապոյր աշխատանքներու:

Դերիկի մատուռին, լեռներուն, ձորերուն, հովիտներուն հոգեպէս կապւած թաւաքալեամը մէկ նպատակ ունեցած է միայն: Այն է՝ Դերիկը դարձնել չէն եւ ապահով վանք-կայան մը, որ ապաստան եւ հանգստավայր, իջեւան ըլլար դէպի երկիր երթեւեկող յեղափոխական խումբերուն, սուրհանդակներուն, զինատար խումբերուն: Ինքը նստէր Դերիկը եւ դառնար յարաբերութեան կապն ու օղակը երկրի եւ կովկասի ու Ատրպատականի միջեւ: Անոր ցանկութիւնն էր ապրիլ ժողովուրդի մէջ, յեղափոխականներու մէջ, հեռու մնար

էջմիածնի աղբեցութենէն եւ ի պահանջել հարկին իր վեղարն ու սքեմն ալ իբր արտաքին շպարներ՝ յարաբերութեան մէջ զնէր պետական պաշտօնեաներու հետ, անոնց վրա հարկ եղած աղբեցութիւնը բանեցնելու համար:

Հանրային գործիչը միշտ ենթակայ եղած է ստոր զրպարտութեանց եւ բամբառանքներու: Այս վիճակին ենթարկեցաւ նաեւ թաւագլեանը, որ ոչ միայն վանքի եկամուտները, այլ մինչեւ իսկ անձնական համեստ դրամական մուտքերը ի սպաս դրաւ յեղափոխական վանքի համար հանգանակութիւն կատարեց: Անոր այս աշխատանքն ալ ըսի-ըսաւներու տեղի տուաւ թէեւ, բայց նա կանգնած մնաց իր բարոյական բարձրութեան վրա: Հակառակորդները անզօր եղան զրպարտութեան կնիքը դրոշմելու անոր ճակատին: Եւ ազնիւ վարդապետը ցաւ ի սիրտ իր նամակներէն մէջ կը գրէ.

« . . . Ափսոս իմ կրած ակամայ, անիրաւ արտաքոյ կարգի հոգեկան տանջանքներին, ափսո՞ս իմ անկեղծ յուղմունքներին: Աղօթեցէք ինձ համար»:

Երախտապարտ ենք ընկ. Սիմ. Վրացեանին, որ կրցաւ չ. Յ. Դաշնակցութեան գիւտանի մէջէն հանել եւ խնամւած, հմուտ դասաւորութեամբ ու ծանօթութիւններով հրատարակութեան տալ թաւագլեանի նամակները, *) որոնք անոր կեանքի վերջին տասնամեակի գործունէութեան եւ փոթորկայոյզ ապրումներու վաւերական աղբիւրներն են:

«Թաւաքալեան նամակները, - կըսէ ընկ. Ս. Վրացեան, ոչ միայն փաստեր ու տեղեկութիւններ են պարունակում, այլ եւ տալիս են գունագեղ, յաճախ մութ ներկերով նկարւած բարքային ու կենցաղային պատկերներ: Այդ նիւթից օգտւելիս երբեք չպէտք է անտես առնել ոչ հեղինակի բնաւորութիւնն ընդհանրապէս, ոչ էլ այն օրեւնիք նրա հոգեկան դրդուած վիճակը: Թաւաքալեանի նամակներին ըի հրա հոգեկան դրդուած վիճակը: Թաւաքալեանի նամակներին ըի հրա հոգեկան դրդուած վիճակը: Հիմա մեկնարկ է թշնամանք գէպի իր անձն ու դրութիւն: Ամէն կողմից նա տեսնում է թշնամանք գէպի իր անձն ու դրութիւն: Նկատում է ու որոշ հիմաթափութիւնց: Առանձ-գործունէութիւնը: Նկատում է ու որոշ հիմաթափութիւն: Առանձ-

« . . . Առհասարակ թաւաքալեանի նամակներից երեւան է գալիս մի չափազանց կասկածամիտ, ջղագրգիռ, հիւանդու տրամադրութիւն: Ամէն կողմից նա տեսնում է թշնամանք գէպի իր անձն ու դրութիւն: Նկատում է ու որոշ հիմաթափութիւնց: Առանձ-

*) «Հայրենիք» ամսագիր 1933, թիւ 1, էջ՝ 103-110, 1933, թիւ 2, էջ՝ 98-112,

1934, թիւ 3, էջ՝ 84-95:

նապէս դժգոհ է իր բարձրագաս իշխանութեան ցոյց տւած վերաբերումից : Նրա նամակները լիքն են վշտով ու դառնութիւններով» :

Ինչպէս վերը յիշեցի, Թաւաքալեանի գործունէութիւնը Սալմաստի եւ Դերիկի մէջ զբաւեց ոչ միայն պարսից, այլ եւ տաճկաց ու ոռւսաց կառավարութեանց ուշագրութիւնը : Թաւրիզի տաճկական հիւպատուը ուշի ուշով կը դիտէր սահմանադլախի վրա կատարող աշխատանքները եւ ճնշում գործ կը գնէր պարսից կառարութեան վրա Թաւաքալեանը հեռացնելու համար :

Սեւ-Քարեցի Սաքօն Թաւաքալեանին յայտնած էր, որ - «Հին Նախիջևանի ոռւս գաւառապետը մի անդամ կանչել է Սարգսին (Սաքոյին) եւ հարցրել է Դ . . . ի (Դերեկի) վան... (վանահայր) Թա . . . նի (Թաւաքալեանի) մասին» :

Այս հարցապնդումները, բնական է, չէին կարող անհետեանք մնալ : Կառավարութեանց բողոքները հասած էին մինչեւ էջմիածին : Եւ Թաւաքալեանը 1893 թ. աշնան զբած իր նամակներու մէջ էջմիածին երթալու ակնարկներ կը լինէ հակառակ իր ցանկութեան : Սակայն նա բնաւ չի ցանկար էջմիածին երթալ .

«Ես առաջ էլ, հիմա էլ ասում եմ՝ կամ Դ. (Դերիկ), կամ Սեւան վասլամ : Ինչ գործ ունիմ ես ինտրիգների կեղտուա աշխարհի մէջ . . . Ես իսկի այստեղի մանր ինտրիգներին չեմ կարողանում դիմանալ, ուր մնաց այստեղի անվերջ ու աննպատակ ինտրիգներին խառնեմ» :

Թաւաքալեանը 1893 թ. Հոկտեմբեր 18-ին կը ներկայանայ Սալմաստի գաւառապետ Հաջի Խանին, զրել կուտայ «մի վառաւոր վէքիլամա», որով Սարգս Սարիբէդ օղլին (Սեւ-Քարեցի Սաքօն) «վեազօր ներկայացուցիչ եւ կառավարիչ է ներկայանում (Դերիկի) Ս. Սատածամօր մենաստանի եւ նրա գիւղի ու հողերի վրա մինչեւ վանահօր Սուրբ էջմիածնից վերադառնալը» :

Սեւ-Քարեցի Սաքօն «վէքիլ» էր նաեւ Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի վանահայր Վահան վարդապետին եւ բացարձակ լիազորութիւն կը վայելէր վանքի գործերուն մէջ :

Դերիկի անվելար վանահայրը, նոյնինքն Սաքօն՝ «ամէն մի նոր կարեւոր գործի համար, եթէ ծամանակը ներում է, պարտաւոր է դիմել Ս. Էջմիածին, վանահօրը, իսկ եթէ որ ժամանակը խիստ նեղ է, պարտաւոր է հարցնել այն անձանց խորհուրդը, որոնց կը յանձնէ վանահայրը գնալու ժամանակ» :

Եւ 1893 թ. աշնան (հաւանաբար նոյեմբեր ամսին) Թաւաքալեանը հրաժեշտ տւաւ իր սիրելի Դերիկին, Սալմաստի եւ Թաւրիզի ընկերներուն ու գնաց էջմիածին, ուր «ինչ որ տեսնում է, նրան ուղ-

Դակի սպանում է հոգեպէս։ Հիասթափում, յուսահատում, ընկ-ձըւում է։»

« Թաւրիզի ընկերները - կը շարունակէ ընկ. Ս. Վրացեանը, - իրար յետեւից նամակներ են գրում նրան, պահանջում են պատասխանել, բայց նա լրում է սիրտ չկայ, չի կարողանում գրել։ Վերջապէս, 1894 թ. ապր. 22 նամակով նա նկարագրում է իր հոգեկան տանջանքները եւ այլաբանական պատմւածքներով յայտնում իր գըւ-իին եկած դժբախութիւնը, իր սիրած էակի դաւաճանութիւնն ու կորուստը, իր հոգեկան փլուզումը։ Սիրած առարկան գեղեցիկ Վարդանն է՝ Խրիմեան Հայրիկը։»

Եւ թաւաքալեանը ծանր խօսքերով ու որակումներով կը քննադատէ Խրիմեան Հայրիկի իրաւացի կամ յանիրաւի ընթացքը՝ էլ-միածնի գործերուն մէջ եւ այլն եւ այլն։ Կարեւորն այն է, որ նա մինչեւ իր մահը հիասթափւած մնաց Խրիմեան Հայրիկէն, որ երբեք չուղեց թաւաքալեանը Դերիկ վերադարձնել նոր դժգոհութեանց եւ բողոքներու առիթ չտալու համար։ Իսկ թաւաքալեանը լիայոյս էր, որ նորէն Դերիկ պիտի երթայ եւ շարունակէ իր յեղափոխական աշխատանքներ։

Թաւաքալեանը 1894 թ. Ապրիլ 22 թւակիր նամակին մէջ իր ցան-կալի վերադարձին մասին կը գրէ։

« . . . Ես ուզում էի Զատկից անմիջապէս յետոյ վերադառնալ, բայց նորին Վեհափառութեան Սրբազնագոյն բարեհաճութեանն էի սպանում։ Զնայելով որ Սրբազն Առաջնորդը (խօսքը Առրպատա-կանի Հայոց Առաջնորդ Սուրբիաս Եպիսկոպոս Պարզեանցի մասին է. Հ. Ա.) լսնդրել է, որ ինձ ուղարկեն իր մօտ, բայց ձգձգում են . . . Սկզբումը ուզեցին զրկել, բայց յետոյ տատանւեցին իսկ այժմ բարձ-րագոյն հրաման եմ ստացել գնալ կարս եւ նրա նահանդի մէջ զետեղ-ւած գաղթականների մասին հոգալ եւ փող բաժանել։»

Սակայն, թաւաքալեանի բուռն ցանկութիւնն է Դերիկ երթալ. « - Ի՞նչ կայ հոն, որ գլուխ կը պատուեցին երթալու համար», կը հարցնէ Խրիմեան Հայրիկէ։

« - Դէ՛, արի, ասա, թէ ի՞նչ կայ, ասելով բեղարեցի, էլի հար-ցընում է», կըգրէ թաւաքալեանը, եւ միջոցներու կը դիմէ, որպէս զի կարս չերթայ։

Զարքաշ եւ տանջւած թաւաքալեանը իր երկարատեւ թափա-ռումներու ընթացքին ստացած էր բրոնխիտի եւ յօդացաւի հիւան-դութիւնները, որոնք շատ ծանր ազդեր էին նաեւ անոր հոգեկանի վութիւնները, որոնք շատ ծանր ազդեր էին նաեւ անոր հոգեկանի վրա։ Գաղթականներուն դրամ բաժնելու գործով 1894 թ. Ապրիլ

23-ին անցաւ Սարդարապատի շրջանի գիւղերը։ Յաջորդ օր գրած իր նամակին մէջ կը գանգատի։

« Սարդարապատի մէջ յաճախ քրտնել՝ մրսելը, շատ անգամ լուերի եւ այլ անյարմարութեանց պատճառով անքուն մնալս եւ համարեա թէ անընդհատ յուղման ենթրկելու դէպքերը՝ իմ գրգռւած ջղերս միանգամայն քայլքայեցին եւ, ի վերջոյ, միանալով հին բըրոնիստիս եւ ռեւմատիզմիս նորոգւած ցաւերիս հետ ձգեցին կատարեալ հիւանդ գրութեան մէջ, Աւագ Հինգչարթի օրը հաղիւ հասայ Մայր-Աթոռը։ Սուրբ Աթոռ Եկայ, իմ սենեակի մէջ գտայ Սիմոնին եւ Քրիստոափորին *), որոնք երկու օր առաջ եկած են եղել ինձ Երեւան հիւր տանելու համար . . . Աւագ Ռւբրաթ օրը գնացինք Երեւան եւ այսօր վեց օր է, որ վերադարձել եմ Ս. իջմիածին», որուն «մըթ-նոլորտը նրան խեղդում է։ Ամէն կողմ տեսնում է անարդարութիւն, վատութիւն։ Հասարակութիւնը նրան թւում է ստրկահոգի, կեղծաւոր, անզգամ, լիբր, եսապաշտ ու էշ»։

Վերջապէս, հակառակ իր ցանկութեան կերթայ կարս՝ գաղթականական գործերով, առիթ կունենայ շրջելու 36 գիւղեր։ Կարսէն դարձեալ կը քաշէ Դերիկի կարօտը, իր այս յուղիչ տողերով։

« . . . իմ Կարսում մնալլ որքան կը տեւէ, յայտնի չէ. ես աշխատում եմ մայիսի վերջին գուրս պրծնել այստեղից, որպէս զի գոնէ յունիսին կարողանամ Դերիկ հասնիլ . . . Խեղդ Դերիկ, Ե՞րբ պէտք է դու հանդիսա վայելես եւ ինձ էլ գոնէ մի քիչ միջիթարես քո վայրենի գրկիդ մէջ ամփոփելով իմ մաշւած մարմնիս աճիւնը . . .»։

Այլ տեղ իր վերադառնալու ցանկութեան մասին կը գրէ.

« . . . Վերադառնալուց յետոյ պէտք է բոլոր միջոցներս գործ դնեմ Սուրբ իջմիածնից եւ անտի Դերիկ գնալու համար»։

Ներքին եւ արտաքին գժւարին պայմաներու, չկամութեանց եւ զանազան պատճառներով Բագրատ վարդապետ Թաւաքալեանը այցեւս չկրցաւ վերդառնալ իւր այնքան սիրած Դերիկը, չկրցաւ շարունակել իւր հայրենանէր ու յեղափոխական աշխատանքները։ Էջմիածնի կողմէն նշանակւեցաւ նաեւ կարսի առաջնորդական փոխանորդ, բայց տարօրինակ յամառութեամբ պահանջեց, որ դարձեալ իրեն յանձնեն Դերիկի վանահայրութիւնը։ Ինչպէս առաջ, այս անդամ ալ անոր ցանկութիւնը վշրւեցաւ էջմիածնի պարիսպներուն տակ։

Հաղիւ քանի մը ամիս վարեց Կարսի առաջնորդական փոխանորդութեան պաշտօնը։ Այսուհետեւ, 1896 թ. Սեպտեմբերին, նշանակ-

*) Սիմոն և Քրիստոափոր Հայութեան եղբայրներ։

ւեցաւ Ալեքսանդրապոլի առաջնորդական փոխանորդ , սակայն այս տեղ մնաց միայն վեց ամիս : Նոյն պաշտօնով՝ 1897 թ . Մարտին անցաւ Գանձակ , ուր պաշտօնավարեց մինչեւ 1900 թ . ի Սեպտեմբերը , երբ կանչւեցաւ Թիֆլիս ու նշանակւեցաւ Առաջնորդարանի հոգեւոր ատեանի (Կոնսիստորիա) նախանդամ եւ Ս . Սարգիս վանքի վանահայր : Թիֆլիսի մէջ , ըստ Լեւոն Սարգսեանի վկայութեան , «աւելի աննշան էր նրա դերը , . . . նա սկսել էր իրան չափազանց զգուշ պահել , նոյնիսկ երբեմն համակերպի առաջնորդի մի քանի պահանջներին . . . իր ոյժերի մեծագոյն մասը վերջերում նա կորցրեց կօնսիստօրիական չնչին գործերի վրա . իջմիածինը չիմացաւ ինչպէս հարկն է օգտուել այդպիսի հազւագիւտ գործչից ^{*)}» :

Սակայն , Թաւաքալեանն իրը առաջնորդական փոխանորդ թէ կարսի , թէ Ալեքսանդրապոլի եւ թէ մանաւանդ Գանձակի մէջ՝ իր անկաշառ եւ ժողովրդանէր գործունէութեամբ բարի եւ պատաւոր անուն թողեց , համակրանքի եւ անկեղծ սիրոյ արժանացաւ ժողովրդական խաւերու կողմէ :

« . . . թէ Ալեքսանդրապոլում եւ թէ Գանձակում հանգուցեալը իր խոհուն բնաւորութեամբ կարողացաւ մեծ համակրութիւն ձեռք բերել » , կը վկայէ «Արարատ»ը , իջմիածնի պաշտօնաթերթը , (1902 , թիւ Ե-Զ . էջ 480) : Նոյնը կը հաստատէ նաեւ «Մուրճ» ամսագիրը (1902 , թիւ 5 , էջ 185) – « . . . Բոլորիս յայտնի է թէ իրբեւ Ալեքսանդրօպոլի եւ Գանձակի յաջորդ ինչ մեծ համակրանք գտաւ Բագրատ վարդապետը այդ տեղերի հայ ժողովրդի սրտում » :

Խրիմեան Հայրիկը գնահատելով անոր ծառայութիւնները՝ բարոյական վարձատրութիւններու արժանացուց զայն՝ ծայրագոյն վարդապետի տիտղոս տալով 1894-ի Մարտ 8-ին , ծաղկեայ փիլոն՝ 1895-ի 0դոստ . 30-ին , վարդապետական լանջախաչ՝ 1896-ի Յունիւր 2-ին , իսկ 1901-ի 0դոստոսին ալ նշանակւեցաւ իջմիածնի Սինուար անդամ , երբ արդէն մարմնապէս քայլքայւած ու հիւանդապին վեճակով կապրէր Բագու իւր հարզատներուն մօտ :

Քսան տարի շարունակ չարքաշ ու թափառական կեանք վարելով , հոգեկան դառնապին ապրումներով ծանրաբենւած , իր յոյսերն ու երազները խորտակւած , հիասթափւած հրաժեշտ տևաւ այս կեանքին եւ 1902-ի Մայիս 12-ին , 52 տարեկան հասակին՝ յաւիտենապէս քիւն իւր աչքերը Բագուի մէջ : Ծովածաւալ բազմութիւն մը եկած փակեց իւր աչքերը Բագուի մէջ : Ծովածաւալ բազմութիւն մը եկած իր վերջին յարզանքը տալու դերիկի վարդապետին , որ Դերիկի

**) «Մուրճ» ամսագիր , 1902 , թիւ 5 , էջ 185-6 :

կարօտով ալ գերեզման իջաւ։ Մարմինն ամփոփուեցաւ Բաղուի Պարապետի Հայոց եկեղեցոյ բակին մէջ։

Այսպէս առկայծող մոմի մը պէս մարեցաւ Թաւաքալեանը, բայց անոր անունը իր մահէն յետոյ անմահ մնաց ու յիշատակը միշտ սերելի։

Հիմա ամայի եւ աւերակ է Դերիկի մենաստանը, որուն առջեւէն խչչալով կերթայ սառնորակ դետակը։ Լուռ ու զարհուրելի է Դուշմանայ ձորը, լքւած է որսորդ Աւոյի տնակը։ Բաֆիի եւ Դերիկի հերոսները չկան այլեւս . . . անոնք դացին ընդմիշտ եւ անդարձ։

Սակայն Դերիկի աւերակ մատուռին ուխտի դացող իւրաքանչիւր հայը խորին պատկառանքով կը յիշէ Բագրատ վարդապետի սիրելի անունը։ Վանքի աւերակ պարիսպներն իսկ վկայ են թէ յեղափոխական վարդապետը որպիսի՛ անձնւիրութեամբ լծւած էր Հայութեան աղատագրութեան սրբազն դործին, որուն նախակարապետներէն եւ ուխտեալ առաքեալներէն մէկն ալ հէնց ինքը՝ Բագրատ Վարդապետ Թաւաքալեանը եղաւ։

Թաւրիզ

